ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, Հ. I

Հայաստանը նախնադարյան-համայնական և ստրկատիրական կարգերի ժամանակաշրջանում, *Երևան, 1971, 991 էջ։*

Հայ ժողովրդի պատմության արդի կոնցեպցիան կազմավորվել է հիմնականում XX դ. 30-ական թվականների վերջին. այն իր արձագանքն է գտել գլխավորապես բուհական դասագրքերում կամ ընդհանուր պատմությանը նվիրված բազմահատորյակներում (հատկապես Ս. Տ. Երեմյանի գրած բաժիններում)։ 1951 թ. լույս տեսավ Հայ ժողովրդի պատմության ձեռնարկը, որը հրատարակության էր պատրաստել ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտը։ Այն մի կարևոր փորձ էր՝ ներկայացնելու հայ ժողովրդի պատմությունը՝ հենված ոչ միայն հայագիտության վերջին նվաճումների վրա, այլև նկատի ունենալով այն գիտական պատկերացումները, որոնք գոյություն ունեին Հայաստանը շրջապատող և հայերի հետ շփման մեջ գտնվող ժողովուրդների վերաբերյալ։ Որոշ առումով այդ ձեռնարկը պիտի դիտվի որպես գրախոսվող գրքի անմիջական նախորդը։

Սույն առաջին հատորը ընդգրկում է Հայաստանի պատմությունը հնագույն շրջաններից մինչև մ. թ. III դ. սկիզբը[1]։ Գիրքը բաղկացած է «Առաջաբանից», «Հայաստանի բնաշխարհը» ներածականից և 7 բաժիններից։ «Առաջաբանում» ի մի է բերված այն կարևորագույնը, որը բնորոշում է հայերի բնակեցման հիմնական տարածքը։ Այդպիսի ամփոփ և բազմակողմանի տեսություն գրականության մեջ թերևս եզակի է։ Ներածականում շարադրված է Հայկական լեռնաշխարհի լեռնագրությունը, նկարագրված են գետերն ու լճերը, կլիման, բուսական և կենդանական աշխարհը, բնական հարստությունները և հաղորդակցության ճանապարհները[2]։

Առաջին հատորի շարադրանքը ընդգրկում է հսկայական դարաշրջան՝ շուրջ 800.000 տարի։ Գրքի 7 բաժինները որոշ չափով համընկնում են նաև այդ ժամանակաշրջանի պարբերացման հետ։ Այստեղ, սակայն, հարկավոր է նշել մի սահման, որը բաժանում է շարադրությունը երկու մասի, այն է՝ Հայաստանը հայերից առաջ և Հայաստանը՝ հայ ժողովրդի առաջացման, տարածման և վերջնական համախմբման պայմաններում։ Ա բաժինը ընդգրկում է հենց նախահայկական շրջանը։

---

1 *Այն պատրաստել է հեղինակային կոլեկտիվը հետևյալ կազմով՝ Բ. Ն. Առաքելյան, Ի. Մ. Դյակոնով, Ս. Տ. Երեմյան, Է. Վ. Խանզադյան, Ն. Վ. Հարությունյան, Հ. Ա. Մարտիրոսյան, Խ. Ա. Մուշեղյան, Բ. Բ. Պիոտրովսկի, Ա. Ա. Սահինյան, Գ. Խ. Սարգսյան, Ս. Հ. Սարգսյան, Գ. Ա. Տիրացյան։ Հատորին կցված է ժամանակագրական աղյուսակ, մատենագիտություն, տեղանունների ու ցեղանունների ցանկ (Ս. Ս. Կոստանյան)։ Հատորը օժտված է երեք քարտեզով՝ Ուրարտուի պետությունը մ. թ. ա. 870—590 թթ., Հայաստանը մ. թ. ա. 66—մ. թ. 224 թթ., Կլավդիոս Պտղոմեոսի քարտեզը, որն ընդգրկում է Կողքիսը, Վիրքը, Աղվանքը, Մեծ Հայքը։ (Առաջին երկու քարտեզի հեղինակն է Ս. Տ. Երեմյանը)։*

Գրախոսվող հատորը խմբագրել են՝ Ս. Տ. Երեմյան (պատ. խմբագիր), Հ. Ա. Մարտիրոսյան, Գ. Խ. Սարգսյան (պատ. խմբագրի տեղակալ), Գ. Ա. Տիրացյան։

2 *Այդ մասը գրված է ինչպես ժամանակակից դիտումների, այնպես և հին սկզբնաղբյուրների հիման վրա։ Այդ կապակցությամբ հարկավոր է թերևս նշել, որ կլիմային վերաբերող տվյալները (էջ 41—43) բնորոշ են ներկայի համար՝ կասկած չկա, որ անգամ վերջին 2—3 հազարամյակների ընթացքում դրանք մի քանի անգամ պիտի փոփոխված լինեին։ Բուսական և կենդանական աշխարհը ևս ապրել են որոշ զարգացում, բայց համապատասխան էջերը շարադրված են օգտագործելով նաև հնագիտական նյութեր, ուստի այստեղ որոշ չափով ստացվել են եղած փոփոխությունները։*

Հնագիտական նյութերը վկայում են, որ մարդկային հասարակությունը Հայաստանում առաջացել է իր զարգացման ամենավաղ շրջանում։ Այդ մասին են խոսում Արտին լեռան կայաններում, Սատանի-դարում և այլուր հայտաբերված շելյան տիպի գործիքները, որոնցով «նախամարդը մտել է նախնադարյան համայնական հասարակարգի զարգացման սկզբնական փուլը։ Այդ գործիքները ճշմարտացի վկաներն են՝ Հայաստանում երկրաբանական վաղ չորրորդական ժամանակում, մարդու բնակության» (էջ 67)։ Հայկական լեռնաշխարհն իր բոլոր մասերով բնակեցված է եղել մարդկային պատմության ամենավաղ շրջաններից սկսած (էջ 74)։ Տարբեր վայրերում հայտաբերված իրերը ապացուցում են մարդկային հասարակության առկայությունը Հայաստանում՝ «մարդկային հոտից» քաղաքակրթությանն անցման բոլոր շրջաններում։ Այդ զարգացումը եղել է անընդմեջ, իրեր են գտնվել ստորին, միջին և վերին պալեոլիթից (հին քարի դար, մ. թ. ա. 800.000—100.000, 100.000—40.000, 40.000—12.000 թթ.), մեզոլիթից (միջին քարի դար, 12.000—8/7.000 թթ.), նեոլիթից (նոր քարի դար, VII—VI հազարամյակներ), էնեոլիթից (պղնձե քարի դար, V—IV հազարամյակներ), վաղ, միջին, ուշ կամ զարգացած բրոնզի դարից (III—I հազարամյակի սկզբները)։

Հնագիտական նյութը մնում է որպես կարևորագույն սկզբնաղբյուր նաև տոհմատիրական կարգերի քայքայման և դասակարգային հարաբերությունների սկզբնավորման շրջանում։ Այն ցույց է տալիս, որ երկրագործությունը դանդաղ է զարգանում, երկրագործությանը վերաբերող իրերը գրեթե չեն փոփոխվում։ «Այնուամենայնիվ, բնակչության աճը, բնակավայրերի ընդլայնումը, խոշոր եղջերավոր անասունների աշխատանքի ավելի լայն կիրառումը երկրագործության մեջ՝ հասցնում են հացահատիկային տնտեսության, բանջարա-բոստանային ու այգեգործական կուլտուրաների մշակության համեմատաբար բարձր մակարդակի» (էջ 163)։ Միաժամանակ զարդանում է և անասնապահությունը։ Տնտեսության մեջ մեծ դեր են կատարում խեցեգործությունը և հատկապես մետաղամշակությունը։ Տնտեսական վերելքը հանգեցնում է մեծ փոփոխությունների՝ առաջանում է մասնավոր սեփականություն, նախնադարյան արտադրահարաբերությունները քայքայվում են։ Մ. թ. ա. XIV դ. վերջերին Հայկական լեռնաշխարհի նախնադարյան համայնքները թևակոխում են իրենց զարգացման վերջին փուլը՝ ուշ բրոնզի և վաղ երկաթի դարի ժամանակաշրջանը, երբ արտադրողական ուժերը բուռն զարգացում են ապրում։

Գրախոսվող գրքում մեծ տեղ է գրավում, բնականաբար, նախնադարյան մարդու գործիքների ուսումնասիրությունը. դա վերաբերում է հատկապես այն նյութերին, որոնք գտնվել են ՀՍՍՀ տարածքի վրա։ Այսպես, մանրամասն վերլուծության են ենթարկված շելյան տիպի հատիչները և ուղեկցող գործիքներ (Սատանի-դար), աշելյան գործիքներ՝ ձեռքի հատիչներ, սրածայրեր, քերիչներ, շեղբեր (Արզնու կայան), միջին պալեոլիթի մուստերյան տիպի գործիքներ՝ ձեռքի հատիչներ, սրածայրեր, քերիչներ, շեղբեր, միջուկներ (Արզնի), մեզոլիթյան առարկաներ (Զաղա, Արեգունի բլուր), էնեոլիթյան քարե և ոսկրե գործիքներ (Թեղատ), Շենգավթի հռչակավոր համալիրի իրերը և այլն։

Հայաստանում գտնված իրերի տիպաբանական վերլուծությունը հնարավորություն է տալիս համեմատել դրանք Եվրոպայի և Ասիայի նման իրերի հետ և գտնել առաջինների տեղը համամարդկային զարգացման ընդհանուր օրինաչափությունների սիստեմում։ Այսպես, «Սատանի-դարի պալեոլիթյան կայանն իր գրված դիրքով, գործիքների հարստությամբ, արխաիկ ու տիպական ձևերով կապող օղակ է հանդիսանում Առաջավոր Ասիայի նախնադարյան մշակույթի, Միջերկրականի, Կովկասի ու Հարավ-ռուսական տափաստանների պալեոլիթյան մշակույթների միջև» (էջ 70)։ Փոքր Ասիայի տարածքի վրա ուրվագծված է հին քարի դարի հայտնագործությունների տարածման երկու հիմնական շրջան՝ Կենտրոնական Փոքր Ասիան և Հայաստանի՝ Ասորիք-Պաղեստինին հարող շրջանը։ Վաղ բրոնզեդարյան շրջանում Հայաստանի մշակույթի ոլորտների մեջ են գտնվում ինչպես Հյուսիսային Կովկասը, այնպես և Ասորիք-Պաղեստին-Կիլիկիայի և Պարսկահայքի երբեմնի առաջատար ծայրագավառները (էջ 126)։ Հայկական լեռնաշխարհը այդ ժամանակ «իբենից ներկայացնում էր հինարևելյան մշակույթի մի տեղական օջախ՝ տնտեսության հիմնական ճյուղերի զարգացման համեմատաբար բարձր մակարդակով։ Տեղական մշակույթի խոր արմատները գնում են դեպի Միջագետք, բայց մյուս կողմից Հայաստանը որոշ ազդեցություն է գործում Առաջավոր Ասիայի մշակույթի զարգացման վրա (էջ 144)։

Հայ ժողովրդի նախապատմությունը, ըստ հնագիտական տվյալների, գրախոսվող գրքի օրգանական և շատ կարևոր մասերից է։ Նախնադարյան հասարակությունը զարգանում էր իրեն հատուկ օրինաչափություններով։ Համապատասխան գլուխների հեղինակներին հաջողվել է ցույց տալ այդ օրինաչափությունները նաև հայկական նյութի հիման վրա։ Պետք է ասել, որ այդ գլուխները ընդգրկում են մեծ մասամբ ՀՍՍՀ տարածքի վրա գտնված նյութերը։ Պատմական Հա-

յաստանի մյուս մարզերը ավելի քիչ են ուսումնասիրված։ Բայց այդ աննպաստ պայմաններում անդամ դժվար թե կարելի լինի, ժամանակակից Թուրքիայի պալեոլիթը ուսումնասիրելու համար, բավարարվել միայն Վ. Պ. Լյուրինի հոդվածով[3]։ Սակայն նման թերություններով հանդերձ՝ գրախոսվող գրքի «հնագիտական» գլուխները աշխատության խոշորագույն արժանիքներից են։

Վաղ և միջին բրոնզի դարից սկսած՝ դիմելով ոչ միայն հնագիտության և մարդաբանության, այլև գրավոր աղբյուրներին, հնարավոր է լինում պարզաբանել Հայկական լեռնաշխարհի և հարևան մարզերի բնակչության պրոբլեմը՝ լեզվա-էթնիկական տեսանկյունից։ Այդ ժամանակաշրջանի մշակույթը ստեղծել են հիմնականում խուրրի-ուրարտական ցեղերը (էջ 146—147)։ Իրենց դերն են կատարել էթիոները, կուտիները, նախախեթերը, կասկերը, նախաքարտվելական ցեղերը, ակկադցիները և արևմտյան սեմիտները։ Ավելի ուշ ժամանակներում այստեղ երևում են հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող ցեղեր։ Առաջավոր Ասիայում այդ ընտանիքը ներկայացված էր անատոլիական, հնդիրանական, փռյուգիական ու հայկական լեզվաճյուղերով։

Հայ ժողովրդի նախապատմությունը ճիշտ ըմբռնելու համար հարկավոր է հաշվի առնել այն տվյալները, որոնք վերաբերում են խեթական և Միտաննի թագավորություններին։ Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան մասը (պատմական Հայաստանի Բարձր Հայքը և ամբողջ Փոքր Հայքը) մ. թ. ա. II հազարամյակում գտնվում էր խեթական թագավորության կազմի մեջ, իսկ հարավ-արևելյանը (Տոփքը և Աղձնիքը, թերևս նաև Վասպուրականը)՝ Միտաննիի մեջ։ Գրախոսվող հատորում տրված է այդ պետությունների պատմության և հասարակական կառուցվածքի մի ակնարկ (էջ 175—188)։ Այդ պետությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մ. թ. ա. XIII դ. վերջերին Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջաններում կային բազմաթիվ ցեղեր ու ցեղային միություններ, որոնք գտնվում էին նախնադարյան համայնական կարգերի վերջին՝ ռազմական դեմոկրատիայի փուլում։ Որոշ վայրերում արդեն սկսել էին ձևավորվել դասակարգային հասարակություն և պետական կազմավորումներ՝ որպես քաղաք-պետություններ կամ ոչ մեծ թագավորություններ։ Ամենայն հավանականությամբ գոյություն ունեին նահապետական մեծ ընտանեկան համայնքներ և դրանց միավորումներ։ Ստրկությունը արդեն հայտնի էր, բայց թույլ էր զարգացած (տե՛ս էջ 202)։

Հատորի Գ բաժինը ամբողջությամբ նվիրված է Ուրարտուի պատմությանը և մշակույթին։ Մանրամասն շարադրված է Ուրարտուի քաղաքական պատմությունը՝ հենված ինչպես դասական, այնպես և վերջերս հայտնաբերված տվյալների վրա։ Ուրարտու-Նաիրի ցեղային միավորումները աղբյուրներում հիշատակվում են մ. թ. ա. XIII դ.։ Ուրարտու պետության կազմավորումը տեղի է ունեցել հավանաբար 870—860 թթ.։ Մենուայի օրոք (810—786) Ուրարտուն, ռազմա-քաղաքական և տնտեսական վերելք ապրելով, զգալիորեն լայնացնում է իր սահմանները և իր հզորության գագաթնակետին հասնում Արգիշտի Ա օրոք (786—764)։ 782 թ. (մ. թ. ա.) Արգիշտին կառուցում է Էրեբունի ռազմա-ստրատեգիական քաղաք-ամրոցը (որից և սերում է ժամանակակից Երևանի անունը)։ VIII դ. 50-ական թթ. Ուրարտուն նվաճում է Արմե երկիրը։ VIII դ. երկրորդ կեսին Ուրարտուն զիջում է իր առաջնությունը Ասորեստանին։ 605 թ. (մ. թ. ա.) Ասորեստանը բաժանվում է Մեդիայի և Բաբելոնի միջև, Ուրարտուն ընկնում է առաջինի տիրապետության տակ։ Ուրարտուի անկախության վերջին մնացուկները վերանում են մոտավորապես մ. թ. ա. 590 թ.։

Ուրարտուն զարգանում էր այն ուղիներով, ինչպես նրանից առաջ Միտաննին, խեթական աշխարհը, Ասորեստանը։ Հիմնական արտադրող ուժերը այստեղ համայնականներն էին և ստրուկները։ Նրանց աշխատանքով էին ստեղծվում արքունական, տաճարային, մասնավոր տնտեսությունները։ Տնտեսական կյանքում մեծ կշիռ ուներ ազատ համայնքը։ Որոշ տվյալներից կարելի է եզրակացնել, որ գոյություն է ունեցել քաղաքային համայնք՝ օժտված մասնակի ինքնուրույնությամբ։ Այս բաժնի 15-րդ գլխում մանրամասն նկարագրված են Ուրարտուի արհեստական ոռոգումը, երկրագործությունը, այգեգործությունն ու խաղողագործությունը, անասնապահությունը, արհեստները, ըստ որում՝ այդ հարցերը լուսաբանվում են ինչպես գրավոր սկզբնաղբյուրներում, այնպես և հնագիտական նյութի, մասնավորապես Կարմիր բլուրի և Արին-բերդի վերջին տարիների պեղումների արդյունքների համատեղ ուսումնասիրությամբ։

Գրախոսվող հատորի կարևորագույն պրոբլեմներից է հայերի էթնոգենեզը։ Մ. թ. ա. II հազարամյակի կեսում Էգեյան աշխարհից և Բալկաններից Փոքր Ասիա են ներթափանցում բազմա-

[3] В. П. Любин, Палеолит Турции и проблема раннего расселения человечества („Советская археология", XXVII, 1956).

թիվ թրակա-փռյուգիական ցեղեր, նրանց հետ միասին՝ նաև արիմներ, որոնք դիտվում են որպես «նախահայերենի կրողներ»։ Այստեղ քննության են առնված արիմների տարածման վայրերը։ Ինչպես պարզվում է, գոյություն ունի հունական միջավայրին աղերսվող հայերի ծագման երկու վարկած՝ «փռյուգիական» և «թեսսալական»։ Արիմների հետ է կապվում Մովսես Խորենացու մոտ հիշատակված «Պռոտին Արմենիան» (Առաջին Հայքը), որը մեկնաբանվում է ոչ թե աշխարհագրական, այլ ժամանակագրական առումով՝ որպես Նախնա՛յան Հայք։ Հայերը իրենց ինքնանվանումը ժառանգել են Հայասա-Ազգիի բնակչությունից (էջ 194), այդ ցեղային միավորումը ևս դեր է կատարել հայ ժողովրդի կազմավորման ընթացքում։

Ուրարտական թագավորության կործանումից հետո, մարական գերիշխանության և հայկական ցեղային միությունների քաղաքական գերիշխանության իրադրության մեջ, ավարտվեց հայ ժողովրդի ձևավորման պրոցեսը, որի հիման վրա երևան եկան առաջին պետական կազմավորումները (էջ 423)։ Դրանք են՝ Արմե-Շուպրիան (հին հայկական Տարոնն ու Աղձնիքը) և Բիայնիլին (Վան կենտրոնով)։ 652—612 թթ. (մ. թ. ա.) առաջինի թագավորն է հայ-սկյութական ծագում ունեցող Պարույրը, Բիայնիլիում իշխում է հայկական Երվանդունի տոհմը։ Այդ երկուսը միավորվելով կազմում են ընդարձակ Հայկական թագավորություն, որը հայերը կոչեցին Հայք, իսկ հարևանները՝ Արմինա, Արմենիա։ Հայկական ցեղերը տարածվում են Հայկական լեռնաշխարհով մեկ։ Քսենոփոնի «Կյուրոպեդիայից» երևում է, որ Հայկական թագավորությունը տարածվել է Մեդիայի սահմաններից (Վանա և Ուրմիա լճերի միջև) մինչև Փոքր և Բարձր Հայքի լեռները։ Հայկական պետությունը սկզբնավորվեց տերիտորիալ կազմակերպությունների տարերային միավորման հիման վրա (էջ 439)։

էթնոգենեզը ինքնին բարդ է, իսկ ուսումնասիրությունը առավել բարդանում է աղբյուրների աղքատության պատճառով։ Տվյալ դեպքում ուսումնասիրողը ստիպված է լինում հյուսել դեպքերի մի շղթա, երբ օղակները իրարից հեռացված են դարերով։ Ակամայից ընդհանրացումները չեն արտահայտում երևույթի ամբողջ բարդությունն ու առանձնահատկությունները։ Այնուամենայնիվ, հայ ժողովրդի ծագման առավել կարևոր փաստերը հնարավորություն են տալիս ինչ-որ պատկերացում կազմել ժողովուրդը և նրա լեզուն կազմող հիմնական գործոնների մասին։

Շարադրության մեջ իրավացիորեն մեծ տեղ է տրված հայ ժողովրդի կազմավորման խնդրում արիմների դերին։ Ցավոք, պատշաճ ուշադրություն չի դարձված «Թորգոմի տան» տեսությանը, որը, կապված լինելով պատմական Թոգարմա տեղանվան հետ, ըստ երևույթին, արիմների դեպի արևելք կատարած շարժման փուլերից է[4]։ Առհասարակ պետք է ասել, որ ոչ բոլոր նյութերն են ի մի բերված էթնոգենեզին նվիրված մասերում։ Այսպես, օրինակ, սպասելի էր, որ «փռյուգիական» և «թեսսալական» վերսիաների հետ ավելի մանրամասն կխոսվի նաև հայկականի մասին։ Սակայն այդ չի արված։ Մյուս կողմից, միջնադարյան «Հայոց ծոր» գավառի անունը դժվար թե կապված լինի հայերի առաջընթացի հետ, համենայն դեպս՝ այդ թեզը ապացուցված համարել չի կարելի (տե՛ս էջ 440)։

Հայ ժողովրդի կազմավորման ընթացքում հայերենը դուրս է մղում ոչ միայն խուրրի-ուրարտական ցեղերի, այլև եկվորների լեզուները։ Արևմուտքից գաղթած մոքսիացիների լեզուն, օրինակ, չքանում է։ Խոսելով մ. թ. ա. II դ. սկզբի դեպքերի մասին, Ստրաբոնը շեշտում է, որ հայերը միալեզու են. համախմբման արդյունք լինելով, դա իր հերթին պիտի նպաստեր կոնսոլիդացմանը։

Մեդացիների դաշնակիցներ, ապա թշնամիներ, հայերը ազատվում են մեդական լծից, բայց շուտով ստիպված են լինում հպատակվել Աքեմենյան աշխարհակալ պետությանը։

Աքեմենյան շրջանը հայոց պատմության մեջ մի հատուկ փուլ է՝ պայմանավորված և՛ քաղաքական, և՛ տնտեսական զարգացմամբ։ Աքեմենյանների պետության կազմում Հայաստանը, վարչական առումով, բաժանված է երկու սատրապությունների՝ 13-րդ և 18-րդ, բայց ընկալվում է որպես մի երկիր։ Այդ շրջանում և՛ երկրագործությունը, և՛ անասնապահությունը համեմատաբար բարձր մակարդակի վրա են, բայց երկրի տնտեսության մեջ առաջինի դերը ավելի նշանակալի է։ 400—399 թթ. ձմռանը Հայաստանի վրայով նահանջող հույն վարձկանների հետ անցնում է Քսենոփոնը։ Նրա աշխատությունը պարունակում է կարևորագույն տեղեկություններ հայկական գյուղական համայնքների վերաբերյալ։

Հայոց հին պատմության և ոչ մի շրջան սկզբնաղբյուրներում այնքան բազմակողմանի չի արտացոլվել, որքան հելլենիզմի դարաշրջանը։ Հելլենիզմը դիտվում է որպես «հինարևելյան ստրկատիրական երկրների պատմական զարգացման որոշակի փուլ, որը նախապատրաստված

---

[4] И. М. Дьяконов, Предыстория армянского народа, Ереван, 1968, стр. 180.

էր այդ երկրների բազմադարյան պատմությամբ, բայց որը բնութագրվում էր նաև արևելյան ժողովուրդների և հունա-մակեդոնացիների աննախընթաց մերձեցմամբ ու փոխազդեցությամբ» (էջ 489)։ Հելլենիստական աշխարհի զարգացման օրինաչափություններն ու յուրահատկությունները այս կամ այն չափով դրսևորվել են նաև Հայաստանում, որը «այդ աշխարհի կարևորագույն երկրներից մեկը հանդիսացավ» (էջ 499)։ Պատահական չէ, որ հելլենիստական Հայաստանի մասին մանրամասն տեղեկություններ են պահպանել ինչպես հունա-հռոմեական, այնպես և հայկական աղբյուրները (հակառակ այն բանի, որ վերջիններս ձևավորվել են դեպքերից դարեր անց)։ Այդ հանգամանքը հնարավորություն է տալիս ներթափանցել մանրամասնությունների մեջ, որոնք էապես հարստացնում են մեր պատկերացումները հելլենիստական Հայաստանի մասին։

Դ բաժնում, ի թիվս այլոց, արծարծված է նաև Հայաստանը մակեդոնական արշավանքների շրջանում հարցը։ Մեծ Հայքը միաժամանակ պահպանում է իր անկախությունը, այստեղ տիրում է Երվանդունի արքայական տոհմը (ի տարբերություն Մեծ Հայքի, Փոքր Հայքը շուտով ենթարկվում է մակեդոնացիներին)։ Շուրջ 301 թ. Հայաստանը անցնում է Սելևկյանների գերիշխանության տակ։ 189 թ. Հայաստանը վերահաստատվում է որպես անկախ երկիր։ Հայոց պատմության մեջ մեծ դեր է կատարում այդ շրջանում Արտաշես Ա Երվանդակը (189—մոտ 160), և գրախոսվող գրքում նա իրավամբ դիտվում է որպես հայ ժողովրդի ողջ պատմական կյանքում հանդես եկած քաղաքական ու ռազմական ամենախոշոր գործիչներից մեկը (էջ 526)։ Արտաշեսի, ինչպես ներքին, այնպես և արտաքին քաղաքականությունը ներկայացված է ամենայն մանրամասնությամբ։ Տիգրան Բ դարաշրջանը բազմիցս գրավել է պատմաբանների ուշադրությունը և լավ ու բազմակողմանի է ուսումնասիրված։ Այդուհանդերձ, գրախոսվող հատորի համապատասխան էջերը մի քայլ առաջ են տանում մեր գիտելիքները այդ շրջանի վերաբերյալ ևս։ Տիգրանի օրոք Հայաստանը միաժամանակ աշխարհակալ պետություն էր, բայց նրա ժամանակ էլ «Հայաստանը հրաժարվել էր աշխարհակալական ձգտումներից և դարձել սոսկ հայկական մի երկիր, որի հետագա խնդիրը պետք է լիներ՝ պաշտպանել իր անկախությունը և պահպանել մեծ ջանքերով ձեռք բերված տերիտորիալ ամբողջականությունը» (էջ 601)։

Հելլենիստական Հայաստանը ստրկատիրական հասարակարգ էր։ Ստրկատիրական հարաբերությունների տարածումն էր, որ նոր որակ տվեց հասարակության զարգացմանը։ Ստրուկների աշխատանքը լայնորեն տարածված է եղել գյուղատնտեսության մեջ. հելլենիստական շրջանի «ագարակները» և «դաստակերտները» մշակում էին գերազանցապես ստրուկները, որոնց օգտագործում էին նաև ճանապարհների շինարարության, վերանորոգման, տաճարների կառուցման, մետաղահանքերի և այլ աշխատանքներում։ Հայաստանը գիտեր ինչպես մասնավոր, այնպես և պետական ստրուկներ։ Աղբյուրները պահպանել են պերճախոս տեղեկություններ ստրկության արտաքին աղբյուրների վերաբերյալ (գերեվարություն), սակայն Հայաստանում ևս գոյություն ունեին ստրկական աշխատանքի ներքին աղբյուրներ (պարտային ստրկություն, ինքնավաճառում և այլն)։ Սակայն, որքան և մեծ լինի ստրուկների դերը ստրկատիրական Հայաստանում և առհասարակ ստրկատիրական Արևելքում, հողային հարաբերությունների բնագավառում հիմնական արտադրողը համայնական գյուղացին էր։ Այդ հանգամանքը միշտ չէ, որ պատշաճ ձևով շեշտվում է հայագիտական աշխատություններում, և գրախոսվող գրքի արժանիքներից է, որ գյուղական համայնքի գաղափարը հետևողականորեն զարգացվում է ինչպես վաղ, այնպես և զարգացած ստրկատիրական հասարակության արտադրող ուժերի պրոբլեմը լուսաբանելիս։

Հելլենիստական աշխարհի թերևս ամենից աչքի ընկնող երևույթը ինքնավար քաղաքն է։ Քաղաքային թեման սկիզբ է առնում դեռևս ակադ. Հ. Մանանդյանի աշխատություններում, սակայն միայն վերջին տասնամյակներում է հաջողվում ներթափանցել Հայաստանի հելլենիստական քաղաքի ներքին կյանքը (գերազանցապես Գ. Խ. Սարգսյանի աշխատություններում)։ Հելլենիստական շրջանի քաղաքաշինությունը և քաղաքները լուսաբանված են ամենայն մանրամասնությամբ։

Սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման այն պրոցեսը, որ մեծ թափ է ստանում հելլենիստական շրջանում, շարունակվում է նաև մ. թ. I—II դդ.։ Ավելին, եղած դիտելիքների սահմաններում հաճախ դժվար է վաղ Արշակունյաց շրջանը զատել Արտաշեսյանից։ Այդ վերաբերում է հողային հարաբերություններին, մասամբ քաղաքային կյանքին։

Հայ ժողովրդի պատմության սույն հատորը երկարատև և լուրջ աշխատանքի արդյունք է։ Գնահատելով այն, ակամայից ուշադրություն է գրավում «սուբյեկտիվ» մի հանգամանք։ Ցուրաքանչյուր բաժնի կամ գլխի հեղինակ տվյալ պրոբլեմատիկայի մասնագետ է, ուստի ի վիճակի է դիմելու անմիջապես սկզբնաղբյուրին։ Անկախ նրանից՝ ընդունելի է թվում այս կամ այն դրույ-

Հնագիտական նյութերը վկայում են, որ մարդկային հասարակությունը Հայաստանում առաջացել է իր զարգացման ամենավաղ շրջանում։ Այդ մասին են խոսում Արտին լեռան կայաններում, Սատանի-դարում և այլուր հայտաբերված շելյան տիպի գործիքները, որոնցով «նախամարդը մտել է նախնադարյան համայնական հասարակարգի զարգացման սկզբնական փուլը։ Այդ գործիքները ճշմարտացի վկաներն են՝ Հայաստանում երկրաբանական վաղ չորրորդական ժամանակում, մարդու բնակության» (էջ 67)։ Հայկական լեռնաշխարհն իր բոլոր մասերով բնակեցված է եղել մարդկային պատմության ամենավաղ շրջաններից սկսած (էջ 74)։ Տարբեր վայրերում հայտաբերված իրերը ապացուցում են մարդկային հասարակության առկայությունը Հայաստանում՝ «մարդկային հոտից» քաղաքակրթությանն անցման բոլոր շրջաններում։ Այդ զարգացումը եղել է անընդմեջ, իրեր են գտնվել ստորին, միջին և վերին պալեոլիթից (հին քարի դար, մ. թ. ա. 800.000—100.000, 100.000—40.000, 40.000—12.000 թթ.), մեզոլիթից (միջին քարի դար, 12.000—8/7.000 թթ.), նեոլիթից (նոր քարի դար, VII—VI հազարամյակներ), էնեոլիթից (պղնձե քարի դար, V—IV հազարամյակներ), վաղ, միջին, ուշ կամ զարգացած բրոնզի դարից (III—I հազարամյակի սկզբները)։

Հնագիտական նյութը մնում է որպես կարևորագույն սկզբնաղբյուր նաև տոհմատիրական կարգերի քայքայման և դասակարգային հարաբերությունների սկզբնավորման շրջանում։ Այն ցույց է տալիս, որ երկրագործությունը դանդաղ է զարգանում, երկրագործությանը վերաբերող իրերը գրեթե չեն փոփոխվում։ «Այնուամենայնիվ, բնակչության աճը, բնակավայրերի ընդլայնումը, խոշոր եղջերավոր անասունների աշխատանքի ավելի լայն կիրառումը երկրագործության մեջ՝ հասցնում են հացահատիկային տնտեսության, բանջարա-բոստանային ու այգեգործական կուլտուրաների մշակության համեմատաբար բարձր մակարդակի» (էջ 163)։ Միաժամանակ զարգանում է և անասնապահությունը։ Տնտեսության մեջ մեծ դեր են կատարում խեցեգործությունը և հատկապես մետաղամշակությունը։ Տնտեսական վերելքը հանգեցնում է մեծ փոփոխությունների՝ առաջանում է մասնավոր սեփականություն, նախնադարյան արտադրահարաբերությունները քայքայվում են։ Մ. թ. ա. XIV դ. վերջերին Հայկական լեռնաշխարհի նախնադարյան համայնքները թևակոխում են իրենց զարգացման վերջին փուլը՝ ուշ բրոնզի և վաղ երկաթի դարի ժամանակաշրջանը, երբ արտադրողական ուժերը բուռն զարգացում են ապրում։

Գրախոսվող գրքում մեծ տեղ է գրավում, բնականաբար, նախնադարյան մարդու գործիքների ուսումնասիրությունը. դա վերաբերում է հատկապես այն նյութերին, որոնք գտնվել են ՀՍՍՀ տարածքի վրա։ Այսպես, մանրամասն վերլուծության են ենթարկված շելյան տիպի հատիչները և ուղեկցող գործիքներ (Սատանի-դար), աշելյան գործիքներ՝ ձեռքի հատիչներ, սրածայրեր, քերիչներ, շեղբեր (Արզնու կայան), միջին պալեոլիթի մուստերյան տիպի գործիքներ՝ ձեռքի հատիչներ, սրածայրեր, քերիչներ, շեղբեր, միջուկներ (Արզնի), մեզոլիթյան առարկաներ (Զառզա, Արեգունի բլուր), էնեոլիթյան քարե և ոսկրե գործիքներ (Թեղուտ), Շենգավթի հռչակավոր համալիրի իրերը և այլն։

Հայաստանում գտնված իրերի տիպաբանական վերլուծությունը հնարավորություն է տալիս համեմատել դրանք Եվրոպայի և Ասիայի նման իրերի հետ և գտնել առաջինների տեղը համամարդկային զարգացման ընդհանուր օրինաչափությունների սիստեմում։ Այսպես, «Սատանի-դարի պալեոլիթյան կայանն իր գրաված դիրքով, գործիքների հարստությամբ, արխաիկ ու տիպական ձևերով կապող օղակ է հանդիսանում Առաջավոր Ասիայի նախնադարյան մշակույթի, Միջերկրականի, Կովկասի ու Հարավ-ռուսական տափաստանների պալեոլիթյան մշակույթների միջև» (էջ 70)։ Փոքր Ասիայի տարածքի վրա ուրվագծված է հին քարի դարի հայտնագործությունների տարածման երկու հիմնական շրջան՝ Կենտրոնական Փոքր Ասիան և Հայաստանի՝ Ասորիք-Պաղեստինին հարող շրջանը։ Վաղ բրոնզեդարյան շրջանում Հայաստանի մշակույթի ոլորտների մեջ են գտնվում ինչպես Հյուսիսային Կովկասը, այնպես և Ասորիք-Պաղեստին-Կիլիկիայի և Պարսկահայքի երբեմնի առաջատար ծայրագավառները (էջ 126)։ Հայկական լեռնաշխարհը այդ ժամանակ «իրենից ներկայացնում էր հինարևելյան մշակույթի մի տեղական օջախ՝ տնտեսության հիմնական ճյուղերի զարգացման համեմատաբար բարձր մակարդակով։ Տեղական մշակույթի խոր արմատները գնում են դեպի Միջագետք, բայց մյուս կողմից Հայաստանը որոշ ազդեցություն է գործում Առաջավոր Ասիայի մշակույթի զարգացման վրա (էջ 144)։

Հայ ժողովրդի նախապատմությունը, ըստ հնագիտական տվյալների, գրախոսվող գրքի օրգանական և շատ կարևոր մասերից է։ Նախնադարյան հասարակությունը զարգանում էր իրեն հատուկ օրինաչափություններով։ Համապատասխան գլուխների հեղինակներին հաջողվել է ցույց տալ այդ օրինաչափությունները նաև հայկական նյութի հիման վրա։ Պետք է ասել, որ այդ գլուխները ընդգրկում են մեծ մասամբ ՀՍՍՀ տարածքի վրա գտնված նյութերը։ Պատմական Հա-

յաստանի մյուս մարզերը ավելի քիչ են ուսումնասիրված։ Բայց այդ աննպաստ պայմաններում անգամ դժվար թե կարելի լինի, ժամանակակից Թուրքիայի պալեոլիթը ուսումնասիրելու համար, բավարարվել միայն Վ. Պ. Լյուբինի հոդվածով[3]։ Սակայն նման թերություններով հանդերձ՝ գրախոսվող գրքի «հնագիտական» գլուխները աշխատության խոշորագույն արժանիքներից են։

Վաղ և միջին բրոնզի դարից սկսած՝ դիմելով ոչ միայն հնագիտության և մարդաբանության, այլև գրավոր աղբյուրներին, հնարավոր է լինում պարզաբանել Հայկական լեռնաշխարհի և հարևան մարզերի բնակչության պրոբլեմը՝ լեզվա-էթնիկական տեսանկյունից։ Այդ ժամանակաշրջանի մշակույթը ստեղծել են հիմնականում խուրրի-ուրարտական ցեղերը (էջ 146—147)։ Իրենց դերն են կատարել էթիոները, կուտիները, նախախեթերը, կասկերը, նախաքարտվելական ցեղերը, ակկադցիները և արևմտյան սեմիտները։ Ավելի ուշ ժամանակներում այստեղ երևում են հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող ցեղեր։ Առաջավոր Ասիայում այդ ընտանիքը ներկայացված էր անատոլիական, հնդիրանական, փռյուգիական ու հայկական լեզվաճյուղերով։

Հայ ժողովրդի նախապատմությունը ճիշտ ըմբռնելու համար հարկավոր է հաշվի առնել այն տվյալները, որոնք վերաբերում են խեթական և Միտանիի թագավորություններին։ Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան մասը (պատմական Հայաստանի Բարձր Հայքը և ամբողջ Փոքր Հայքը) մ. թ. ա. II հազարամյակում գտնվում էր խեթական թագավորության կազմի մեջ, իսկ հարավ-արևելյանը (Ծոփքը և Աղձնիքը, թերևս նաև Վասպուրականը)՝ Միտանիի մեջ։ Գրախոսվող հատորում տրված է այդ պետությունների պատմության և հասարակական կառուցվածքի մի ակնարկ (էջ 175—188)։ Այդ պետությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մ. թ. ա. XIII դ. վերջերին Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջաններում կային բազմաթիվ ցեղեր ու ցեղային միություններ, որոնք գտնվում էին նախնադարյան համայնական կարգերի վերջին՝ ռազմական դեմոկրատիայի փուլում։ Որոշ վայրերում արդեն սկսել էին ձևավորվել դասակարգային հասարակություն և պետական կազմավորումներ՝ որպես քաղաք-պետություններ կամ ոչ մեծ թագավորություններ։ Ամենայն հավանականությամբ գոյություն ունեին նահապետական մեծ ընտանեկան համայնքներ և դրանց միավորումներ։ Ստրկությունը արդեն հայտնի էր, բայց թույլ էր զարգացած (տե՛ս էջ 202)։

Հատորի Գ բաժինը ամբողջությամբ նվիրված է Ուրարտուի պատմությանը և մշակույթին։ Մանրամասն շարադրված է Ուրարտուի քաղաքական պատմությունը՝ հենված ինչպես դասական, այնպես և վերջերս հայտնաբերված տվյալների վրա։ Ուրարտու-Նաիրի ցեղային միավորումները աղբյուրներում հիշատակվում են մ. թ. ա. XIII դ.։ Ուրարտու պետության կազմավորումը տեղի է ունեցել հավանաբար 810—860 թթ.։ Մենուայի օրոք (810—786) Ուրարտուն, ռազմա-քաղաքական և տնտեսական վերելք ապրելով, զգալիորեն լայնացնում է իր սահմանները և իր հզորության գագաթնակետին հասնում Արգիշտի Ա օրոք (786—764)։ 782 թ. (մ. թ. ա.) Արգիշտին կառուցում է Էրեբունի ռազմա-ստրատեգիական քաղաք-ամրոցը (որից և սերում է ժամանակից Երևանի անունը)։ VIII դ. 50-ական թթ. Ուրարտուն նվաճում է Արմե երկիրը։ VIII դ. երկրորդ կեսին Ուրարտուն զիջում է իր առաջնությունը Ասորեստանին։ 605 թ. (մ. թ. ա.) Ասորեստանը բաժանվում է Մեդիայի և Բաբելոնի միջև, Ուրարտուն ընկնում է առաջինի տիրապետության տակ։ Ուրարտուի անկախության վերջին մնացուկները վերանում են մոտավորապես ս. թ. ա. 590 թ.։

Ուրարտուն զարգանում էր այն ուղիներով, ինչպես նրանից առաջ Միտանին, խեթական աշխարհը, Ասորեստանը։ Հիմնական արտադրող ուժերը այստեղ համայնականներն էին և ստրուկները։ Նրանց աշխատանքով էին ստեղծվում արքունական, տաճարային, մասնավոր տնտեսությունները։ Տնտեսական կյանքում մեծ կշիռ ուներ ազատ համայնքը։ Որոշ տվյալներից կարելի է եզրակացնել, որ գոյություն է ունեցել քաղաքային համայնք՝ օժտված մասնակի ինքնուրույնությամբ։ Այս բաժնի 15-րդ գլխում մանրամասն նկարագրված են Ուրարտուի արհեստական ոռոգումը, երկրագործությունը, այգեգործությունն ու խաղողագործությունը, անասնապահությունը, արհեստները, ըստ որում՝ այդ հարցերը լուսաբանվում են ինչպես գրավոր սկզբնաղբյուրներում, այնպես և հնագիտական նյութի, մասնավորապես Կարմիր բլուրի և Արին-բերդի վերջին տարիների պեղումների արդյունքների համատեղ ուսումնասիրությամբ։

Գրախոսվող հատորի կարևորագույն պրոբլեմներից է հայերի էթնոգենեզը։ Մ. թ. ա. II հազարամյակի կեսում էգեյան աշխարհից և Բալկաններից Փոքր Ասիա են ներթափանցում բազմա-

[3] В. П. Любин, Палеолит Турции и проблема раннего расселения человечества („Советская археология", XXVII, 1956).

թիվ թրակա-փռյուգիական ցեղեր, նրանց հետ միասին՝ նաև արիմներ, որոնք դիտվում են որպես «նախահայերենի կրողներ»։ Այստեղ քննության են առնված արիմների տարածման վայրերը։ Ինչպես պարզվում է, գոյություն ունի հունական միջավայրին աղերսվող հայերի ծագման երկու վարկած՝ «փռյուգիական» և «թեսսալական»։ Արիմների հետ է կապվում Մովսես Խորենացու մոտ հիշատակված «Պռոաին Արմենիան» (Առաջին Հայքը), որը մեկնաբանվում է ոչ թե աշխարհագրական, այլ ժամանակագրական առումով՝ որպես Նախնայան Հայք։ Հայերը իրենց ինքնանվանումը ժառանգել են Հայասա-Ազզիի բնակչությունից (էջ 194), այդ ցեղային միավորումը ևս դեր է կատարել հայ ժողովրդի կազմավորման ընթացքում։

Ուրարտական թագավորության կործանումից հետո, մարական գերիշխանության և հայկական ցեղային միությունների քաղաքական գերիշխանության իրադրության մեջ, ավարտվեց հայ ժողովրդի ձևավորման պրոցեսը, որի հիման վրա երևան եկան առաջին պետական կազմավորումները (էջ 423)։ Դրանք են՝ Արմե-Շուպրիան (հին հայկական Տարոնն ու Աղձնիքը) և Բիայնիլին (Վան կենտրոնով)։ 652—612 թթ. (մ. թ. ա.) առաջինի թագավորն է հայ-սկյութական ծագում ունեցող Պարույրը, Բիայնիլիում իշխում է հայկական Երվանդունի տոհմը։ Այդ երկուսը միավորվելով կազմում են ընդարձակ Հայկական թագավորություն, որը հայերը կոչեցին Հայք, իսկ հարևանները՝ Արմինա, Արմենիա։ Հայկական ցեղերը տարածվում են Հայկական լեռնաշխարհով մեկ։ Քսենոփոնի «Կյուրոպեդիայից» երևում է, որ Հայկական թագավորությունը տարածվել է Մեդիայի սահմաններից (Վանա և Ուրմիա լճերի միջև) մինչև Փոքր և Բարձր Հայքի լեռները։ Հայկական պետությունը սկզբնավորվեց տերիտորիալ կազմաձևությունների տարերային միավորման հիման վրա (էջ 439)։

Էթնոգենեզը ինքնին բարդ է, իսկ ուսումնասիրությունը առավել բարդանում է աղբյուրների աղքատության պատճառով։ Տվյալ դեպքում ուսումնասիրողը ստիպված է լինում հյուսել դեպքերի մի շղթա, երբ օղակները իրարից հեռացված են դարերով։ Ակամայից ընդհանրացումները չեն արտահայտում երևույթի ամբողջ բարդությունն ու առանձնահատկությունները։ Այնուամենայնիվ, հայ ժողովրդի ծագման առավել կարևոր փաստերը հնարավորություն են տալիս ինչ-որ պատկերացում կազմել ժողովուրդը և նրա լեզուն կազմող հիմնական գործոնների մասին։

Շարադրության մեջ իրավացիորեն մեծ տեղ է տրված հայ ժողովրդի կազմավորման խնդրում արիմների դերին։ Ցավոք, պատշաճ ուշադրություն չի դարձված «Թորգոմի տան» տեսությանը, որը, կապված լինելով պատմական Թոգարմա տեղանվան հետ, ըստ երևույթին, արիմների դեպի արևելք կատարած շարժման փուլերից է[4]։ Առհասարակ պետք է ասել, որ ոչ բոլոր նյութերն են ի մի բերված էթնոգենեզին նվիրված մասերում։ Այսպես, օրինակ, սպասելի էր, որ «փռյուգիական» և «թեսսալական» վերսիաների հետ ավելի մանրամասն կխոսվի նաև հայկականի մասին։ Սակայն այդ չի արված։ Մյուս կողմից, միջնադարյան «Հայոց ձոր» գավառի անունը դժվար թե կապված լինի հայերի առաջընթացի հետ, համենայն դեպս՝ այդ թեզը ապացուցված համարել չի կարելի (տե՛ս էջ 440)։

Հայ ժողովրդի կազմավորման ընթացքում հայերենը դուրս է մղում ոչ միայն խուրրի-ուրարտական ցեղերի, այլև եկվորների լեզուները։ Արևմուտքից գաղթած մոքսիացիների լեզուն, օրինակ, չքանում է։ Խոսելով մ. թ. ա. II դ. սկզբի դեպքերի մասին, Ստրաբոնը շեշտում է, որ հայերը միալեզու են. համախմբման արդյունք լինելով, դա իր հերթին պիտի նպաստեր կոնսոլիդացմանը։

Մեդացիների դաշնակիցներ, ապա թշնամիներ, հայերը ազատվում են մեդական լծից, բայց շուտով ստիպված են լինում հպատակվել Աքեմենյան աշխարհակալ պետությանը։

Աքեմենյան շրջանը հայոց պատմության մեջ մի հատուկ փուլ է՝ պայմանավորված և՛ քաղաքական, և՛ տնտեսական զարգացմամբ։ Աքեմենյանների պետության կազմում Հայաստանը, վարչական առումով, բաժանված է երկու սատրապությունների՝ 13-րդ և 18-րդ, բայց ընկալվում է որպես մի երկիր։ Այդ շրջանում և՛ երկրագործությունը, և՛ անասնապահությունը համեմատաբար բարձր մակարդակի վրա են, բայց երկրի տնտեսության մեջ առաջինի դերը ավելի նշանակալի է։ 400—399 թթ. ձմռանը Հայաստանի վրայով նահանջող հույն վարձկանների հետ անցնում է Քսենոփոնը։ Նրա աշխատությունը պարունակում է կարևորագույն տեղեկություններ հայկական գյուղական համայնքների վերաբերյալ։

Հայոց հին պատմության և ոչ մի շրջան սկզբնաղբյուրներում այնքան բազմակողմանի չի արտացոլվել, որքան հելլենիզմի դարաշրջանը։ Հելլենիզմը դիտվում է որպես «հինարևելյան ստրկատիրական երկրների պատմական զարգացման որոշակի փուլ, որը նախապատրաստված

[4] И. М. Дьяконов, Предыстория армянского народа, Ереван, 1968, стр. 180.

էր այդ երկրների բազմադարյան պատմությամբ, բայց որը բնութագրվում էր նաև արևելյան ժողովուրդների և հունա-մակեդոնացիների աննախընթաց մերձեցմամբ ու փոխազդեցությամբ» (էջ 489)։ Հելլենիստական աշխարհի զարգացման օրինաչափություններն ու յուրահատկությունները այս կամ այն չափով դրսևորվել են նաև Հայաստանում, որը «այդ աշխարհի կարևորագույն երկրներից մեկը հանդիսացավ» (էջ 499)։ Պատահական չէ, որ հելլենիստական Հայաստանի մասին մանրամասն տեղեկություններ են պահպանել ինչպես հունա-հռոմեական, այնպես և հայկական աղբյուրները (հակառակ այն բանի, որ վերջիններս ձևավորվել են դեպքերից դարեր անց)։ Այդ հանգամանքը հնարավորություն է տալիս ներթափանցել մանրամասնությունների մեջ, որոնք էապես հարստացնում են մեր պատկերացումները հելլենիստական Հայաստանի մասին։

Դ բաժնում, ի թիվս այլոց, արծարծված է նաև Հայաստանը մակեդոնական արշավանքների շրջանում հարցը։ Մեծ Հայքը միաժամանակ պահպանում է իր անկախությունը, այստեղ տիրում է Երվանդունի արքայական տոհմը (ի տարբերություն Մեծ Հայքի, Փոքր Հայքը շուտով ենթարկվում է մակեդոնացիներին)։ Շուրջ 301 թ. Հայաստանը անցնում է Սելևկյանների գերիշխանության տակ։ 189 թ. Հայաստանը վերահաստատվում է որպես անկախ երկիր։ Հայոց պատմության մեջ մեծ զեր է կատարում այդ շրջանում Արտաշես Ա Երվանդականը (189—մոտ 160), և գրախոսվող գրքում նա իրավամբ դիտվում է որպես հայ ժողովրդի ողջ պատմական կյանքում հանդես եկած քաղաքական ու ռազմական ամենախոշոր գործիչներից մեկը (էջ 526)։ Արտաշեսի, ինչպես ներքին, այնպես և արտաքին քաղաքականությունը ներկայացված է ամենայն մանրամասնությամբ։ Տիգրան Բ դարաշրջանը բազմիցս գրավել է պատմաբանների ուշադրությունը և լավ ու բազմակողմանի է ուսումնասիրված։ Այդուհանդերձ, գրախոսվող հատորի համապատասխան էջերը մի քայլ առաջ են տանում մեր գիտելիքները այդ շրջանի վերաբերյալ ևս։ Տիգրանի օրոք Հայաստանը միաժամանակ աշխարհակալ պետություն էր, բայց նրա ժամանակ էլ «Հայաստանը հրաժարվել էր աշխարհակալական ձգտումներից և դարձել սոսկ հայկական մի երկիր, որի հետագա խնդիրը պետք է լիներ՝ պաշտպանել իր անկախությունը և պահպանել մեծ ջանքերով ձեռք բերված տերիտորիալ ամբողջականությունը» (էջ 601)։

Հելլենիստական Հայաստանը ստրկատիրական հասարակարգ էր։ Ստրկատիրական հարաբերությունների տարածումն էր, որ նոր որակ տվեց հասարակության զարգացմանը։ Ստրուկների աշխատանքը լայնորեն տարածված է եղել գյուղատնտեսության մեջ. հելլենիստական շրջանի «գագարակները» և «դաստակերտները» մշակում էին գերազանցապես ստրուկները, որոնց օգտագործում էին նաև ճանապարհների շինարարության, վերանորոգման, տաճարների կառուցման, մետաղահանքերի և այլ աշխատանքներում։ Հայաստանը գիտեր ինչպես մասնավոր, այնպես և պետական ստրուկներ։ Աղբյուրները պահպանել են պերճախոս տեղեկություններ ստրկության արտաքին աղբյուրների վերաբերյալ (գերեվարություն), սակայն Հայաստանում ևս գոյություն ունեին ստրկական աշխատանքի ներքին աղբյուրներ (պարտային ստրկություն, ինքնավաճառում է այլն)։ Սակայն, որքան և մեծ լինի ստրուկների դերը ստրկատիրական Հայաստանում և առհասարակ ստրկատիրական Արևելքում, հողային հարաբերությունների բնագավառում հիմնական արտադրողը համայնական գյուղացին էր։ Այդ հանգամանքը միշտ չէ, որ պատշաճ ձևով շեշտվում է հայագիտական աշխատություններում, և գրախոսվող գրքի արժանիքներից է, որ գյուղական համայնքի գաղափարը հետևողականորեն զարգացվում է ինչպես վաղ, այնպես և զարգացած ստրկատիրական հասարակության արտադրող ուժերի պրոբլեմը լուսաբանելիս։

Հելլենիստական աշխարհի թերևս ամենից աչքի ընկնող երևույթը ինքնավար քաղաքն է։ Քաղաքային թեման սկիզբ է առնում դեռևս ակադ. Հ. Մանանդյանի աշխատություններում, սակայն միայն վերջին տասնամյակներում է հաջողվում ներթափանցել Հայաստանի հելլենիստական քաղաքի ներքին կյանքը (գերազանցապես Գ. Խ. Սարգսյանի աշխատություններում)։ Հելլենիստական շրջանի քաղաքաշինությունը և քաղաքները լուսաբանված են ամենայն մանրամասնությամբ։

Սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման այն պրոցեսը, որ մեծ թափ է ստանում հելլենիստական շրջանում, շարունակվում է նաև մ. թ. I—II դդ.։ Ավելին, եղած գիտելիքների սահմաններում հաճախ դժվար է վաղ Արշակունյաց շրջանը զատել Արտաշեսյանից։ Այդ վերաբերում է հողային հարաբերություններին, մասամբ քաղաքային կյանքին։

Հայ ժողովրդի պատմության սույն հատորը երկարատև և լուրջ աշխատանքի արդյունք է։ Գնահատելով այն, ակամայից ուշադրություն է գրավում «սուբյեկտիվ» մի հանգամանք։ Ցուրաքանչյուր բաժնի կամ գլխի հեղինակ տվյալ պրոբլեմատիկայի մասնագետ է, ուստի ի վիճակի է դիմելու անմիջապես սկզբնաղբյուրին։ Անկախ նրանից՝ ընդունելի է թվում այս կամ այն դրույ-

թը, թե ոչ, ընթերցողը շարունակ զգում է, որ հետևությունը արված է աղբյուրների անմիջական ուսումնասիրությամբ։ Ա հատորը արտահայտում է գիտության այսօրվա վիճակը, շատ մասերում այն հենվում է միայն վերջին տարիներին կատարված աշխատանքի վրա։

Հատորի շարս գրանքը ամենուրեք հենվում է մանրամասն մշակված պատմական աշխարհագրության վրա։ Կարելի է համոզված ասել, որ առանց Ս. Երեմյանի բազմամյա հետազոտությունների արդյունքների Ա հատորի բազմաթիվ հետևություններ անհնարին կլինեին։ Պետք է նշել, սակայն, որ դրքին կցված քարտեզների ձևը անհաջող է և ամփոփ պատկերացում չի տալիս։ Այդ տեսակետից 1951 թ. հրատարակությանը կցված ատլասը, չնայած և համառոտ, բայց առավել պատկերավոր էր և ավելի էր ծառայում իր նպատակին։ Թվում է, որ գունավոր քարտեզը, այն էլ տարածա՛նը, ավելի կբարձրացներ գրախոսվող հատորի արժեքը։

Ա հատորի արժանիքներից են մշակույթին նվիրված էջերը։ Այսպես, 10-րդ գլուխը խոսում է նախնադարյան Հայաստանի պաշտամունքի, կրոնի և արվեստի մասին (այստեղ, ի միջի այլոց, վեր են լուծված վերջին ժամանակներս հայտնաբերված ժայռանկարները՝ նախնադարյան արվեստի նմուշները), 16-րդ գլուխը նվիրված է Ուրարտուի արվեստին, կրոնին, գրին ու գրականությանը։ է բաժինը ամբողջությամբ նվիրված է հելլենիստական շրջանի տարբեր բնագավառների մշակույթին։ Կարևորն այն է, որ այդ էջերը օրգանապես կապված են ընդհանուր շարադրանքին, և մշակույթը ուրվագծված է պատմական հետնախորքի վրա։ Մշակույթի ճյուղերից մեկն է նաև դրամագիտությունը. տնտեսականից բացի այն կատարում է և՛ գաղափարական, և՛ քաղաքական, և՛ գեղարվեստական դեր։ Հայկական դրամների անդրանիկ օրինակները ծագում են մ. թ. ա. III—II դդ. (Սոփք, Փոքր Հայք)։ Հատորը պարունակում է հայկական դրամագիտության հաջողված ակնարկ՝ մինչև մ. թ. I—II դդ. ներառյալ։

Հատորի շարադրանքը խստորեն հետևում է ժամանակագրական կարգին։ Երբ խոսվում է քաղաքական պատմության մասին, այդպիսի մոտեցումը ընդհանուր առմամբ արդարացված է և՛ սկզբունքորեն, և՛ մեզ հասած նյութով։ Սակայն սոցիալ-տնտեսական հարցերին նվիրված գլուխները կարելի էր կազմել շեղվելով այդ սկզբունքից։ Այսպես, քաղաքների և քաղաքաշինության մասին նախ խոսվում է 516—520 (IV—III դդ. քաղաքներ) և 541—542 էջերում (մ. թ. ա. II դ. քաղաքաշինություն), ապա «Քաղաքը հելլենիստական դարաշրջանի Հայաստանում», «Առևտուրը և քաղաքները Հայաստանում մ. թ. I—II դդ.» ենթագլուխներում։ Apriori կարելի է պնդել, որ նշված 4—5 հարյուրամյակի ընթացքում քաղաքներն ապրել են արդյունաշատ զարգացում։ Բայց արդյո՞ք եղած նյութը այնպիսին է, որ հնարավոր լինի ուրվագծել քաղաքային կյանքը ըստ շրջանների, աղբյուրների սղության պայմաններում դասավորել տվյալները ըստ նրանց ծագման ժամանակագրական կարգի։ Թվում է, որ սոցիալ-տնտեսական պրոբլեմները լուսաբանելիս հարկավոր էր համապատասխան բաժինները կազմել ավելի ամփոփ ձևով (ելնելով, կրկնում եմ, ոչ թե մեթոդոլոգիական, այլ մեթոդական նկատառումներից)։ Եթե յուրաքանչյուր բաժին ունենար իր աղբյուրագիտական մասը, ապա դա ակամայից որոշ փոփոխություններ կմտցներ սոցիալ-տնտեսական հարցերին նվիրված շարադրանքի մեջ։

Գրքի գիտական ապարատը, ժամանակագրական աղյուսակը, մատենագիտությունը, ցանկերը ընդհանուր առմամբ լավ են կազմված և դյուրացնում են հատորի օգտագործումը[5]։ Նկարազարդական նյութը հարուստ է, բայց միշտ չի վավերացված, իսկ վերարտադրության տեխնիկան, շատ անգամ, անընդունելի։

Ամփոփելով՝ նշենք, որ «Հայ ժողովրդի պատմության» Ա հատորը հայագիտության լուրջ նվաճումներից է. այն երկար տարիներ կգրավի թե՛ մասնագետի և թե՛ ընթերցողի ուշադրությունը։

Կ. Ն. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու
Լենինգրադ

---

5 Տարօրինակ է, սակայն, որ ամբողջովին սկզբնաղբյուրների բնագրերի վրա հենված աշխատության մեջ Հոմերոսի Իլիականը բացառություն է կազմում. մատենագրության մեջ այն նշված է միայն հայերեն թարգմանությամբ (էջ 928)։ Անհասկանալի է նաև, թե ինչու նկարների մակագրություններում հիշատակվող տեղանունները, ինչպես և օգտագործված աղբյուրների հեղինակների անունները չեն մտել համապատասխան ցանկերի մեջ։